

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15**

**ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության**

**27.07.2020թ.**

**ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

- Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մխիթարյանը - մարզպետարանի գլխավոր քարտուղար
- Վ.Խաչատրյանը - մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ա.Մատինյանը, Վ.Ղարսայանը, Ժ.Ղազարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Հ.Գասպարյանը, Կ.Ադամյանը, Ս.Գրիգորյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Հ.Այվազյանը - մարզպետի խորհրդական
- Ռ.Խանզադյանը - մարզպետի օգնական
- Ն.Հովհաննիսյանը - մարզպետի օգնական
- Ռ.Մարգարյանը - փորձագետ

**Օրակարգում՝**

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Փոխմարզպետ՝ Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.  
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

**Հանձնարարվեց**

**1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանին և քաղաքաշինության վարչության պետի Ժ/պ Վ.Ղարսայանին՝**

Անհրաժեշտ հետևողականություն դրսևորել Վանաձորի Լազյան փողոցի ապօրինաշինության հետևանքների վերացման ուղղությամբ և այդ, ինչպես նաև բոլոր նմանատիպ խախտումների ու դրանց հետևանքների վերացման նկատմամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ իրազեկել հանրությանը:

**2. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի Ժ/պ Լ.Վարդանյանին, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ռ.Հարությունյանին և զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին՝**

Երկշաբաթյա ժամկետում՝ ըստ ոլորտների, ներկայացնել առկա խնդիրները և առաջարկություններ՝ ոլորտների զարգացման և խնդիրների լուծման վերաբերյալ:

**3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի ժ/պ Վ.Ղարսայանին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին և փորձագետ Ռ.Մարգարյանին՝**

Համատեղ քննարկել և մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ Ալավերդի համայնքի սուբվենցիոն ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների ծավալների փոփոխության վերաբերյալ:

**4. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի ժ/պ Վ.Ղարսայանին և փորձագետ Ռ.Մարգարյանին՝**

Մարզում սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շինարարությունների ընթացքի վերաբերյալ իրականացնել մշտադիտարկումներ և ներկայացնել ամենշաբաթյա տեղեկատվություն:

**5. ՀՀ Լոռու մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին և իրավաբանական բաժնի պետ Ա.Սահակյանին՝**

Համատեղ, ինչպես նաև համայնքների ղեկավարների ու տեսչական մարմնի ներկայացուցիչների հետ քննարկել և ներկայացնել առաջարկություններ հողամասերի վարձակալության պայմանագրերի վերանայման, հողատեսքերի փոփոխությունների և հողօգտագործման ծավալների, ինչպես նաև խախտումների վերացման ուղղությամբ:

**6. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝**

Մեկշաբաթյա ժամկետում ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ տարբեր ծրագրերով կնքված պայմանագրերի ժամկետների երկարացման հնարավորությունների վերաբերյալ:

**7. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝**

Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ Լոռի Բերդ համայնքն սպասարկող անասնաբույժի վերաբերյալ:

**8. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ս.Գրիգորյանին՝**

Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ Վանաձորի նախկին մանկատան սաների բնակապահովման վերաբերյալ:

 Invalid signature



ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան  
Հեռ. 0322 /4-32-99